Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Բարի մամա» բարեգործական ՀԿ

31 դեկտեմբերի 2021թ. և 31 դեկտեմբերի 2022թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Գործունեության մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 500 964
+ 374 10 500 961

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armeı
T + 374 10 500 964
+ 374 10 500 961

«Բարի մամա» բարեգործական ՀԿ-ի Խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Բարի մամա» բարեգործական ՀԿ-ի (Կազմակերպություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները, ինչպես նաև այդ ամսաթվերին ավարտված տարիների գործունեության մասին հաշվետվությունները, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունները և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Կազմակերպության՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվերին ավարտված տարիների ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմինը մտադիր է լուծարել Կազմակերպությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին ՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

Grant Thornton

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

15 ապրիլի 2024թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	191,102	201,464
Ոչ ընթացիկ կանխավճարներ		-	340
		191,102	201,804
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		2,311	4,296
Կանխավճարներ և այլ դեբիտորական պարտքեր		3,492	4,508
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	5	6,234	1,157
		12,037	9,961
Ընդամենը ակտիվներ		203,139	211,765
Պարտավորություններ և զուտ ակտիվներ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	6	175,289	187,343
		175,289	187,343
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր		602	1,049
Փոխառություններ կապակցված կողմերից		26,304	16,522
		26,906	17,571
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		944	6,851
		944	6,851
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		203,139	211,765

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. ապրիլի 15-ին:

Մարինե Ադուլյան

Նախագահ

«ԲԱՐԻ ՄԱՄԱ»
«БАРИ МАМА»
«BARI MAMA»
02202591

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 21-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Գործունեության մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Շնորհներից եկամուտ	7	56,280	55,322
Այլ եկամուտ		436	1,344
Հատուցումներ աշխատակիցներին		(17,009)	(16,372)
Նվիրատվություններ և ֆինանսական աջակցություն		(17,345)	(14,288)
Մաշվածություն և ամորտիզացիա		(13,401)	(12,296)
Ընթացիկ բարեկարգման և պահպանման գծով ծախսեր		(8,207)	-
Կոմունալ, կապի գծով և տպագրության ծախսեր		(4,844)	(9,506)
Միջոցառումների գծով ծախսեր		(562)	(731)
Տրանսպորտային ծախսեր		(767)	(1,458)
Այլ ծախսեր		(441)	(803)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ		(47)	523
Տարվա արդյունք		(5,907)	1,735

Գործունեության մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 21-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	5,116	5,116
Տարվա արդյունք	1,735	1,735
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,851	6,851
Տարվա արդյունք	(5,907)	(5,907)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	944	944

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 21-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Նվիրատվություններից ստացված դրամական միջոցներ	42,843	38,331
Հաճախորդներից ստացված և այլ դրամական միջոցներ	2,596	875
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(25,608)	(30,523)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(12,744)	(12,406)
Վճարումներ Պետական բյուջե	(5,060)	(4,941)
Ֆինանսական օժանդակություն շահառուներին	(2,916)	(2,777)
Կատարված այլ վճարումներ	(1,070)	(1,313)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(1,959)	(12,754)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(2,699)	(18,316)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(2,699)	(18,316)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Փոխառության ստացում	9,782	16,522
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	9,782	16,522
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	5,124	(14,548)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(47)	(38)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	1,157	15,743
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	6,234	1,157

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 21-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Բարի մամա» բարեգործական ՀԿ-ն Հայաստանի Հանրապետությունում հիմնված կազմակերպություն է: Կազմակերպությունը գրանցվել է Հայաստանի Հանրապետության ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 2015թ. մայիսի 11-ին 211.171.856839 գրանցման համարով:

Կազմակերպության գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության գործող օրենքների, միջազգային պայմանագրերի և Կազմակերպության Կանոնադրության համաձայն:

Կազմակերպությունը ստեղծվել է հայ մայրիկների ջանքերով, որի հիմնական նպատակն է աջակցել հաշմանդամության պատճառով լքված և մանկատներում հայտնված հաշմանդամություն ունեցող երեխաներին: Կազմակերպությունն ունի մոտ 8,000 անդամ:

Կազմակերպության առաքելությունը երեխաներին տուն և ընտանիք պարգևելն է:

Կազմակերպության շահառուներն են.

- Հղիության և հետծննդաբերական պաթոլոգիաների առումով ռիսկային խմբերին պատկանող հղի կամ վաղ հետծննդաբերական շրջանում գտնվող կանայք,
- Միայնակ և/կամ սոցիալապես անապահով, անաշխատունակ հղի կամ վաղ հետծննդաբերական շրջանում գտնվող կանայք,
- Առողջական խնդիրների և/կամ հաշմանդամության պատճառով կենսաբանական ծնողի կողմից լքված 0-6 տարեկան երեխաները,
- Մանկատան սաները,
- Մանկատնից դուրս եկած 18 տարին լրացած և խնամակալ չունեցող երիտասարդները,
- Սոցիալապես անապահով ընտանիքները,
- Այն կազմակերպությունները, որոնք աշխատում են վերը նշված թիրախային խմբերի հետ,
- Նախադպրոցական հաստատությունները;
- Ներառական կրթություն իրականացնող և չիրականացնող հանրակրթական դպրոցները:

Կազմակերպության գործունեության հասցեն է Այգեգործական 6-րդ թաղամաս 1/2, գյուղ Ջրվեժ, ՀՀ:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 3 մարդ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4 մարդ):

Գործարար միջավայր

Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը շարունակում է մնալ համեմատաբար անկայուն, 44-օրյա Արցախյան պատերազմի հետևանքները դեռևս էական ազդեցություն են ունենում երկրի ընդհանուր վիճակի և տնտեսվարող սուբյեկտների գործունեության վրա:

2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվում է՝ զգալի ազդեցություն թողնելով աշխարհի վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի Դաշնության դեմ: Արևմտյան երկրները քննարկում են գոյություն ունեցող պատժամիջոցների ընդլայնումը: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության էական առևտրատնտեսական գործընկերն է, ուստի սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը լուրջ ազդեցություն են ունեցել Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա: Համաշխարհային մակարդակով ավելի խոր պատժամիջոցներ կիրառելը հանգեցնել են բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման:

Ի լրումն, 2022թ. սեպտեմբերի 13-ին, որպես Լեռնային Ղարաբաղի տևական հակամարտության շարունակություն, որը սրվել էր 2020թ. սեպտեմբերին՝ հրադադարի ռեժիմի խախտմամբ, որը համեմատաբար վերականգնվել էր 2020թ. նոյեմբերի 9-ին ներգրավված կողմերի միջև ստորագրված հայտարարությամբ, Հայաստանի Հանրապետության տարածքում տեղի ունեցան երկօրյա մարտական գործողություններ: Այս գործողությունների արդյունքում քաղաքական և տնտեսական իրավիճակն էլ ավելի սրվեց: 2022թ. դեկտեմբերից Հայաստանը Արցախին կապող գլխավոր ճանապարհը շարունակում էր փակ մնալ՝ ենթադրելով ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական ճնշումներ: 2023թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դեմ մեկօրյա ռազմական գործողություններից հետո 120.000 մարդ ստիպված եղավ լքել իրենց տները և ներգաղթել Հայաստանի Հանրապետություն: Քաղաքական անկայուն իրավիճակի, միջազգային ճանապարհների պարբերաբար փակման, հրադադարի ռեժիմի կարճաժամկետ խախտումների, Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածք ապօրինի ներթափանցման փորձերի հետևանքով, դժվար է հստակ կանխատեսել նշված պայմանների տնտեսական ազդեցությունը կազմակերպության գործունեության վրա:

Իրավիճակի հետագա զարգացումը կարող է էական ազդեցություն ունենալ Կազմակերպության գործունեության, ֆինանսական վիճակի և ապագա գործունեության արդյունքների վրա, ինչը դժվար է կանխատեսել՝ հաշվի առնելով քաղաքական անկայունության հետ կապված անորոշության աստիճանը:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Կազմակերպության գործունեության վրա:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»*:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Կազմակերպության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Կազմակերպության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Կազմակերպության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 8-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Կազմակերպությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2021թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ Կազմակերպությունը չի կիրառել հետևյալ հրապարակված, սակայն դեռևս չգործող նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտները.

- Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ), (2023թ. հունվարի 1)
- Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ), (2023թ. հունվարի 1)
- Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8 փոփոխություն), (2023թ. հունվարի 1)
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1 և Գործնական կիրառություն 2), (2023թ. հունվարի 1)
- Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն) և ոչ-ընթացիկ պարտավորություններ պայմանագրերի հետ (ՀՀՄՍ 1 փոփոխություն), (2024թ. հունվարի 1)

- Վարձակալության պարտավորություն Վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքի ժամանակ (ՀՀՄՍ 16 փոփոխություն), (2024թ. հունվարի 1)

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Կազմակերպության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 393.57 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 420.06 ՀՀ դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 480.14 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 542.61 ՀՀ դրամ):

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների հոդվածները, բացառությամբ հողի, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Վարձակալական գույք հանդիսացող շենքերը նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են ֆինանսական վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում (որը որոշվում է՝ համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ

ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	-	20 տարի
Տրանսպորտային միջոցներ և սարքավորումներ,	-	8 տարի
Արտադրատնտեսական գույք և այլն	-	8 տարի
Այլ	-	5-8 տարի:

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

3.3 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են հումքի, կամ նյութի ձևով՝ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

3.4 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են իրական արժեքով ՝ հանած գործարքի հետ կապված ուղղակիորեն վերագրելի ծախսումները, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

Ֆինանսական պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են իրական արժեքով՝ հանած գործարքի հետ կապված ուղղակիորեն վերագրելի ծախսումները, և չեն ճանաչվում որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.5 Պահուստներ

Կուտակված արդյունքը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

3.6 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Կազմակերպությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Կազմակերպության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են տարվա արդյունք՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Դոնորների կողմից անվերապահորեն ստացված դրամաշնորհները ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում են տարվա արդյունքում, երբ դառնում են ստացման ենթակա:

Ստացված շնորհների գծով ամբողջ եկամուտը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հետաձգված եկամուտ, երբ այն դառնում է ստացման ենթակա, այսինքն՝ այն պահին, երբ Կազմակերպությունը ստորագրում է իրավական պայմանագիր: Հետաձգված եկամուտը փոխանցվում է գործունեության մասին հաշվետվություն՝ շնորհին կից պայմանների իրականացմանը զուգընթաց: Ընդ որում, եթե հետաձգված եկամտի գումարը գերազանցում է Կազմակերպության կողմից շնորհին կից պայմանների իրականացման համար պահանջվող գումարը, գերազանցող մասը նվազեցվում է հետաձգված եկամտի մնացորդից և համապատասխան դոնորի գծով դեբիտորական պարտքի մնացորդից: Այս ճշգրտման գումարը չի արտացոլվում գործունեության մասին հաշվետվությունում:

Եթե ճանաչված դրամաշնորհի գումարը գերազանցում է Կազմակերպության ծախսերը, որոնք անհրաժեշտ են ամբողջ դրամաշնորհի իրականացման համար, ապա գերազանցված գումարը նվազեցվում է ճանաչված հետաձգված եկամտի և դրամաշնորհների գծով դեբիտորական պարտքի գումարից:

3.7 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող արդյունքի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Կազմակերպությունը կստանա բավարար հարկվող արդյունք, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Կազմակերպությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.8 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Կազմակերպությանը մատուցում են ծառայություններ, Կազմակերպության աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Կազմակերպությունը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Կազմակերպությունը ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Կազմակերպությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.9 Եկամուտ

Եկամուտը ձևավորվում է հիմնականում դրամաշնորհներից և նվիրատվություններից: Դրամաշնորհներից ստացված եկամտի հաշվապահական հաշվառման քաղաքականության համար տե՛ս ծանոթագրություն 3.7:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Հող, շենքեր և շինություններ	Տրանսպորտային միջոցներ և սարքավորումներ	Արտադրատնտեսական գույք և այլն	Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	66,475	10,036	20,236	105,058	201,805
Ավելացում	-	-	5,632	12,684	18,316
Ներքին տեղաշարժ	117,742	-	-	(117,742)	-
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	184,217	10,036	25,868	-	220,121
Ավելացում	-	-	3,039	-	3,039
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	184,217	10,036	28,907	-	223,160
Կուտակված մաշվածություն և արժեզրկում					
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	1,774	544	4,038	-	6,356
Տարվա հաշվարկ	8,083	255	3,963	-	12,301
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,857	799	8,001	-	18,657
Տարվա հաշվարկ	8,727	255	4,419	-	13,401
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	18,584	1,054	12,420	-	32,058
Հաշվեկշռային արժեք					
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	174,360	9,237	17,867	-	201,464
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	165,633	8,982	16,487	-	191,102

5 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	128	474
Բանկային հաշիվներ ՀՀ դրամով	6,106	683
	6,234	1,157

6 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Տարեսկզբի մնացորդ	187,343	193,264
Փոխանցում հետաձգված եկամտից	419	1,522
Տարվա ավելացում	-	4,110
Ճանաչված եկամուտ (տե՛ս ծանոթագրություն 7)	(12,473)	(11,553)
Տարեվերջի մնացորդ	175,289	187,343

Ընկերության բոլոր ակտիվները ձեռք են բերվել դրամաշնորհային միջոցներով:

7 Շնորհներից եկամուտ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12,473	11,553
Նպատակային նվիրատվություններ	43,771	43,733
Այլ նվիրատվություններ	36	36
	56,280	55,322

8 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

8.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Կազմակերպությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Շնորհների ճանաչում

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 3.7-ում՝ շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ Կազմակերպությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է: Յուրաքանչյուր դրամաշնորհային պայմանագրի համար, Կազմակերպությունը գնահատում է, թե որքանով է հավանական, որ այն ամբողջովին կբավարարի դրամաշնորհին կցված պայմանները և շնորհը ամբողջովին կստանա: Նման գնահատում կատարելիս ղեկավարությունը հիմնվում է այդ և դոնորի հետ ունեցած նախկին փորձի, նման դրամաշնորհներն ամբողջովին իրականացնելու Կազմակերպության հնարավորության վրա:

9 Ֆինանսական գործիքներ

9.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

9.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6,234	1,157
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	6,234	1,157

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	602	598
Փոխառություններ կապակցված կողմերից	26,304	16,522
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	26,906	17,120

10 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Կազմակերպությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Կազմակերպությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Կազմակերպությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Կազմակերպության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Կազմակերպության դրամաշնորհներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են արտարժույթով:

2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների մնացորդներ չունի:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Կազմակերպությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Կազմակերպության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդները և ժամկետային ավանդները:

Պարտքային ռիսկը կառավարվում է՝ ելնելով Կազմակերպության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է դրանք բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Կազմակերպությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Կազմակերպությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Կազմակերպությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը (ներառյալ դոնորների կողմից ստացված դրամաշնորհները), մասնավորապես՝ դրամական միջոցները: Ընկերության դրամական միջոցները գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

11 Պայմանականություններ

11.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Կազմակերպությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Կազմակերպության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Կազմակերպությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

11.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

12 Կապակցված կողմեր

Կազմակերպության կապակցված կողմերը ներառում են Կազմակերպության խորհրդի անդամներին, նախագահին և նախագահի ընտանիքի անդամներին:

12.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Կազմակերպության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները հետևյալն են.

Հազար դրամ Գործարքներ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ	8,519	5,982
Փոխառության ստացում	9,782	16,522

2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի մնացորդներ իրեն կապակցված կողմերի հետ: